

ԱՅԳԱԼՈՅՍՈՂ ԽՈՅԵՐ ԵՒ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

1. ԿԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԹՈՎՉԱՆՔԸ
2. ԿԱՐՍՏՈՒԹԻՒՆ--ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ
3. ԿԱԻԱՏԱԼ Ե՛Ւ ՏԱՌԱՊԻԼ
4. ԿԱՅԸ ԻՆՉՈՒ ԶԷՆՔ ՎԵՐՑՈՒՑ
5. ԿՈԳԵԿԱ՞Ն ԹԷ ՖԻԶԻԲԱԿԱՆ
6. ԻՄ ՊԱՏՃԱՌՈՎՍ ՊԻՏԻ ԳԱՅԹԱԿՂԻՔ--ՅԻՍՈՒՍ

*REFLECTIONS AT DAWN
AND MEDITATIONS*

ԱԼՊԵՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
2001

Միրելի Պր. Ալպեո

Աւելի քան տասը տարիներ անցան մեր առաջին հանդիպումէն: Ծառ լաւ կը յիշեմ: 1990ի գարունն էր: Երբ բացի, Հայ լեզուի և մշակոյթի մեր ամառնային խտացեալ դասընթացին համար հասնող տասնեակ դիմումներու կարգին, Թորոնթոյի կնիքը կրող այդ պահարանը՝ որ ձեր դիմումը կը պարունակէր, զարմացման և հիացման խառնուրդ զգացում մը ծագեցաւ մէջս, աչքերս յառելով դիմողի ծննդեան թուականին, բաւական վեր՝ մեր դասընթացի միջինէն, պահ մը վարանած նոյնիսկ՝ թէ ինչ և ինչպէս պատասխանէի: Բայց վարանումս տեղիք տուա շուտով վստահութեան՝ մինչ աչքերս հետզհետէ կը սահէին ձեր վճիտ, գեղափայլ ձեռագրին տողերով, որոնց արանքներէն կը ծորէր կեանքի լաւատեսութեան, տեսլապաշտութեան, նոր նուաճումներու հետախնդրութեան այնքան մեկին ու յստակ, այնքան տենդոտ ու խիզախ հոգեմիտում մը, որ այդ պահուն իսկ բոլորովին անհեթեթ թուեցաւ ինծի՝ զրկուիլ նման անձնաւորութեան և անձնականութեան մը ծանօթութիւնը, առօրեային հետ ձուլուած ներկայութիւնը մեր միջեւ վայելելու հաճոյքէն:

Այսօր, աւելի քան տաս տարիներու յետադարձ ակնարկով, համոզուած եմ աւելի քան երբեք՝ որ այդ որոշումս նախախնամութեան գործն էր, վերին թելադրանք մը կարծես, այնպիսիներէն՝ որոնց տարողութիւնը չենք զգար ընդհուպ, որոնք սակայն դրոշմ մը կը թողուն անպայման մեր կեանքին մէջ: Ծնորհակալ եմ ձեզի, որ՝ ձեր *Այգալուսող Խոհեր և Մտածումներ* հատորեակին ներկայացում մը գրելու ձեր առաջարկով՝ ինձ շատ հաճելի առիթն ընծայեցիք այս զգացումներս դրսեւորելու:

Ինչպէս դուք իսկ կ'արձանագրէք ձեր 5 Յունուար 2001 պատուական թուակրին մէջ, Վենետիկ անցուած այդ ամառը խորապէս ակօսած է ձեր կեանքը: Արդարեւ այս վերջին տասնամեակի ընթացքին դուք երեւան եկաք Հայ հոգեւոր գրականութեան և հրատարակչութեան զոյգ անդաստաններուն մէջ, որոնք մանաւանդ այսօր աւելի քան հարկադրիչ՝ անձկայրեաց կարիքն ունի զայն հերկող, ոռոգող, պարարտացնող մշակներու: Հաստատեցիք, ձեր

իսկ ոյժերով, «Կանթեղալոյս Հրատարակութիւն»ը, որու միջոցով լոյս ընծայեցիք՝ աշխոյժ թափով, օծուն գրիչով, հարազատ շունչով, հոգեւոր հատորեակներու շարք մը ներիմաց խորհրդածութիւններու, թելադրիչ յորդորակներու, փրկչամերձ հայեցողութիւններու, որոնց միակ «թերի»ն, եթէ ներելի է այսպէս արտայայտուիլ, այն է, կր կարծեմ, որ անոնք պէտք էին ուղղուիլ աւելի ընդարձակ, աւելի հոծ հանրութեան մը, հրատարակչական և գրածաւալչական ծոխ հնարաւորութիւններով, հասնելու համար Խօսքին կարօտ և քաղցած ուրիշ անհամար հոգիներու եւս, որոնց յաճախ ո՛չ թէ բարի կամեցողութիւնը, այլ լոկ բանին լուրն է որ կը պակսի: Բայց, ինչպէս իտալական առած մը կ'ըսէ, պէտք է երբեք սահման դնել Նախախնամութեան:

Ի սրտէ կը մաղթեմ ուրեմն՝ որ Նախախնամութիւնը օժտէ «Կանթեղալոյս»ը նոր միջոցներով, ինչո՞ւ չէ, նաեւ շնորհիւ հաւատաւոր մեկենասներու, ընձեռելով պատեհութիւնը ձեր գրչին յաջորդական վաստակներուն՝ ներգործելու հրատարակչական առաւելագոյն ծաւալման հնարաւորութիւններով:

Իմ ամենաջերմ մաղթանքը, սակայն, այն է՝ որ Տէրը դեռ երկա՛ր, արեւոտ տարիներ բեղուն պահէ ձեր գրիչը, որպէսզի շարունակէք ձօնել ձեր թանկագին լուման ի սփոփանս և ի վայելումն հոգետենչ հայորդիներու:

Լեւոն Վրդ. Զէֆիեան

Վենետիկ, 22 Փետրուար 2001
Ի Տօնի Սրբոց Վարդանանց

ԱՅԳԱԼՈՅՍՈՂ ԽՈՅԵՐ

ԵՒ

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԹՈՎՉԱՆՔԸ

“Հարուստ” բառը հայ լեզուի մէջ կու գայ *հար* արմատէն, որպէս հարուածող կամ հարուածելու կարողութիւն ունեցող՝ *ուժեղ, հզօր, կարող՝ այսինքն բռնութեամբ իշխող բռնակալ մը*:

Հարստութեան և ունեւորութեան հմայքը կը նշանակէ, թէ իրեն տիրացողներուն ան կու տայ դիւթանքի ու թովչանքի իշխանութիւնն ու զօրութիւնը, որպէսզի ստացողները կարենան առաւել եւս դրամի փոխել աղքատներու համբերութիւնը, կոյսերու գեղեցկութիւնը և գործաւորներու քրտինքը:

Պատմութեան մէջ անմոռանալի հետքեր ձգած են ընչաքաղց հողատէրեր, իրենց տմարդի և անխիղճ վերաբերմունքով, կցելով որբեւարիներու տուները իրենց կալուածներուն: Ինչո՞ւ համար Եւրոպայի հազարաւոր բնակիչները թողուցին իրենց հայրենիքը և կամաւորապէս գաղթեցին Նոր Աշխարհ՝ Ամերիկաներ:

Պատճառը:

Որովհետեւ Եւրոպայի աւատապետական դրութիւնը (*feudal system*) կեղեքած էր եւրոպացին ու Ռուսիոյ միլիոնաւոր ծորտերն ու ռամիկները, որոնք ափ մը հող իսկ չունէին հերկելու, մշակելու և իրենք զիրենք ապրեցնելու համար: Նոյնիսկ՝ եթէ գտնուէր անօթի ծորտ մը որ ձուկ որսար ծորտատրի մը լիճէն կամ գետէն, անօթի թշուառին ձեռքերը կը կտրէին...: Չմոռնանք Վիգթոր Հիւկոյի "Ժանվալժան"ը: Այսպիսի ահաւոր ընկերաքաղաքական դրութենէ մը իրենք զիրենք ազատագրելու համար, Եւրոպայի և Ռուսիոյ միլիոնաւոր շինականները գաղթեցին դէպի Ամերիկաներ: Անվերադարձ դարերէ ի վեր ա՛յս եղած է հարստութեան քմծիծաղը ու կը շարունակէ ցարդ: Սադայէլական ժպտադէմ դիմակով ու հարստահարութեան և դրամահաւաքի համար ծարտարարուեստի հիմնարկութիւններ կ'արտադրեն անհամար մահացու զէնքեր և կը քշեն հազարաւոր երիտասարդներ հեռաւոր երկնակամարներ կոուելու համար *իրե՛նց* պատերազմը Վիէթնամի և Բորեայի մէջ,

ոչ թէ արդարութեան և իրաւունքի համար, այլ բազմացնելու համար իրենց հարստութիւնը՝ տիրապետութիւնը:

Այսպիսի իշխանութիւն մը, բռնակալական վարչաձեւ մըն էր, որ Սատանա խոստացաւ Յիսուսի Անոր մկրտութենէն անմիջապէս յետոյ երբ աղօթելու համար առանձնացած էր անապատին մէջ: Սակայն յաղթական Յիսուս Քրիստոս մերժեց սոյն ամօթալի առաջարկը: Որովհետեւ Ան կը հաւատար *սիրո՛յ* զօրութեան ու զոհողութեան հմայքին, որ փրկարար է ու կենսապարգեւ փոխանակ կողմնակից ըլլալու ճորտատէր բռնակալներու և իշխելու արտասուագին շինականներու: Յաղթական Քրիստոս նախընտրեց Ի՛նք տառապիլ և ունենալ հաւատարիմ և Ձինք *սիրող* քաղաքացիներ:

Մեծահարուստ քարիւղի առետրականներ զիրար կոտորած են Արեւմուտքի մէջ: Դիւահար կատաղութեամբ գրաւած են Միջին Արեւելքի նաւթահորերը ու գերի վարած տեղւոյն բնիկ ժողովուրդները:

Անկուշտ դրամատէր սեղանաւորներ (bankers) գրչի մէկ շարժումով սնանկութեան մատնած են հասարակ ժողովուրդը, գրաւելով և իրացնելով անոնց հողերն ու ինչքերը:

Ծառ մը բարեգործական հիմնարկութիւններու բարձրագոյն իշխանութեան գաւազանակիրներ բռնաբարած են կոյս ուսանողուհիները և որբեւայրի մայրերը որովհետեւ իրենց ձեռքն էր դրամի զօրութիւնը:

Այսպիսի խարդախ հարստութեան դիւթանքով թակարդուած երիտասարդ իշխան մըն էր, որ փափաքեցաւ հետեւիլ Յիսուսի, և ապրիլ պատրանքի ու նաեւ ճշմարտութեան երկակենցաղ կեանք մը: Հարուստ իշխանագունը, կարծելով, որ տիրացած է յաւիտենական կեանքի իր առաջին հարցումով, կ'ուղղէ երկրորդ հարցում մը եւս Յիսուսի, ըսելով.

«Արդ, ի՞նչ բանով պակաս եմ դեռ»:

Յիսուս կը դիտէ այս երիտասարդ իշխանաւորը: Կը տեսնէ անոր հոգեկան պայքարը: Յիսուս կը սիրէ երիտասարդ իշխանը, սակայն Ան կը սիրէ լաւագոյնը՝ ճշմարտութիւնը, որ ստեղծագործ ու կենարար հոգին է աւելի քան այս իշխանաւորը, ու կ'ըսէ անոր.

***«Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ՝ գնա ծախէ՛
բու ունեցուածքդ և տո՛ւր աղքատներուն ...
և դուն ետեւե՛ս եկուր»***--Մատթ. ԺԹ. 21:

Երիտասարդ իշխանը կ'իմանայ պայմանը հետեւելու այս Նազովրեցի Մարգարէին, որ զինք կրնայ կատարեալ ընել: Սակայն

հաճոյապաշտութեան մղումը յաղթահարելով անոր հոգեկան ձգտումները, կ'անջատէ զինքն Յիսուսէ ու ան տրտմած կը հեռանայ կեանքի Ակնադրութեն փնտոելու համար կատարեալ ուրախութիւնը դրամական ու փառասիրութեան արբեցութեան մէջ:

Միթէ այսպէս եղած չէ՞ դրամատէր և կալուածատէր մեծահարուստներու կեանքի վախճանը: Երբ մօտեցած է ժամը ուր մահասարսուռ շղարշը փաթաթէ հեք թշուառական մեծահարուստները: Միայն մահուան ոտնաձայնի ատենն է որ դրամատէրներ տրամադրած են իրենց հարստութիւնը եկեղեցաշինութեան, կրթական նպատակներու և անօթիները կերակրելու: Ոչ թէ իրենց մարդասիրութեան պատճառաւ, այլ որովհետև իրենց ունեցածը անկարող էին տանիլ իրենց հետ:

Այս իշխանատրները թէև տուած են իրենց բոլոր ունեցածը ազգին, եկեղեցիին ու դպրոցին, սակայն ո՛չ իրենք զիրենք, ու երբեք առիթը չեն փնտոած հետեւելու Յիսուսի, որովհետև իրենց ամբողջ կեանքի ընթացքին ջանացած և ապրած են իրենց "ես"ին ու փառքին համար: Այս պատճառաւ Յիսուս Քրիստոսի քննուշ ձայնը, սկսեալ Հրէաստանի բլուրներէն. «Հնչում է իբրև անլուելի զանգակատուն հոգեպարար մեղեդի» լեցնելով աշխարհի համայն տարածքը և մարդկային ներաշխարհի խոր սրբարանը արձագանգելով.

**«Երանի՜ հոգիով աղֆատներուն, որովհետև
անո՛նցն է երկինքի արքայութիւնը»:**

Նազովրեցի Մարդեղեալը քաջատեղեակ էր հարուստներու խաբէութեան և անոնց քմահաճոյքի զօրութեան: Անոնք թմրեցուցեր ու լուեցուցեր էին իրենց միտքն ու խիղճը: Յիսուս Քրիստոս ծանչցաւ աշխարհի և անոր բնակիչներու ստրկական տառապանքը, որ արդիւնքն էր մարդկային ազահութեան, ընչատիրութեան և միահեծան բռնակալութեան:

Վերոյիշեալ վարչաձեւի դրութեան և կացութեան հայեացքով Յիսուս դիտեց մարդկային փոխ-յարաբերութիւնները: Տեսանողի մարգարէաշունչ իշխանութեամբ Ան յայտարարեց. «Երանի հոգիով աղֆատներուն» հոգեպարար նոր պատգամը: Յիսուս մարդկային մտածումը վերիվայրող մըն էր, ոչ թէ խանգարելու կամ տապալելու համար, այլ ուղղութիւն և պարկեշտութիւն ցոյց տալու համար մարդկային մտածումին: Փրկելու և ազատագրելու համար մարդկութիւնը ինքնակործան աղէտէ:

Յիսուս չբողոքեց հարստութեան և ունեւորութեան դէմ, այլ

հարստութեան ամբարտաւան և կոկոզավիզ անխղճութիւնը և անողորմ անզգայնութիւնը դատապարտեց: Յիսուս՝ Ի՛նք, որպէս Տէրն ու Ճարտարապետը աշխարհի և անոր հարստութեան, ցոյց տուաւ «*Հոգւոյ աղփատութեան*» ներոյժ և դրական զօրութիւնը Ի՛ր *ապրումով* և նոյնիսկ Իր *Մնունդովը*: Բոլոր կրօնֆներու և հաւատալիֆներու մէջ, Յիսուս Բրիստոս եղաւ Ռահվիրան, որ ցոյց տուաւ աստուածային սէրն ու ողորմութիւնը և անյիշաչարութիւնը:

Որպէս Ռահվիրայ Ան ջանաց դաստիարակել մարդկութիւնը, որ ըլլան «*հոգիո՛վ աղփատ*» նոյնիսկ հարստութեան և ունեւորութեան մէջ, ինչպէս Ինքն էր: Որովհետեւ հոգեկան աղփատութեան զգայնութիւնը և փորձառութիւնը ենթական կը նոյնացնէ աղփատին, չփառորին և կարօտեալին հետ: Այս «*հոգեկան աղփատութեան*» իմանալիութեան և հասկացողութեան մէ՛ջ միայն, մարդ արարած կրնայ տեսնել զԱստուած իր *ընկեր-մարդուն* մէջ:

Մինչեւ Յիսուս Բրիստոսի Աստուածայատնութիւնը, աշխարհի մէջ մարդկութեան հանդէպ սէր չկար: Մարդ կը սիրէր միայն իր արինակիցը: Բաղափայտ կը սիրէր միայն այն անձերը որոնք փառափ պարիսպէն նե՛րս կը գտնուէին: Մարդկութիւնը դարձաւ մարդասէր (ոչ կատարելապէս դեռ) մի միայն Յիսուս Բրիստոսի գալով: Նոյնիսկ ցարդ ունինք՝ Կեսարացիներու ակումբ, Այնթապցիներու ակումբ, Ուրֆացիներու ակումբ, Պոլսեցիներու ակումբ, եւլն, բայց չունինք Հայութեան Ակումբ մը ընդհանուր գաղթաշխարհի մէջ:

Փոխանակ հարուստը՝ իր ընկերը ստրկացնելու ճգմելու, կողոպտելու և կործանելու, իր հոգիի աղփատութեան շնորհիւ, պարտի դառնալ համեստ, խոնարհ, սիրող ու կարեկից: Այսպիսի՛ հարուստներու համար է որ մեր Տէրը կ'ըսէ.

«Եկէ՛ք, իմ Հօրս օրհնեալները, ժառանգեցէ՛ք արքայութիւնը որ ձեզի համար պատրաստուած է աշխարհիս սկիզբէն: Վասնզի անօթեցայ և ինծի ուտելիք տուիք, ծարաւեցայ և ինծի ջուր տուիք, օտար էի՝ ներս առիք զիս. մերկ էի՝ հագուեցուցիք, հիւանդ էի՝ այցելութեան եկաք, բանտն էի՝ տեսութեան եկաք»--Մատթ. ԻԵ. 34-36:

Անցեալ դարերուն, միայն *հարուստներն* էին որ կրնային վերոյիշեալ ծառայութիւնը մատուցանել կարօտեալներուն և թշուառներուն: Զակֆէոս և Մատթէոս մաքսաւորները, որոնք մեծահարուստներ էին իրենց ժամանակուան, ոչ թէ աղփատութեան

ցնցոտիներ հագուեցան ու ծառայեցին իրենց Տիրոջ Յիսուսի, այլ՝ միայն իրենց *հոգիները* աղփատացուցին: Անգթութեան փոխարէն՝ ողորմութեամբ, հպարտութեան փոխարէն՝ երկայնմտութեամբ և բռնակալութեան ու կողոպտուի փոխարէն՝ կարեկցութեամբ վարուելով: Անոնք փոխակերպեցին իրենց սրտին աննիւթական բագինը աստուածային տաճարի: Որովհետեւ դիւրին է զգեստաւորումով աղփատ ձեւանալ ինչպէս բազմաթիւ Միջնադարեան ուխտաւորներ և արդի հաւատացեալներ, որոնց հոգիներուն գոռոզութիւնը և մեծամտութիւնը ոչ սահման ունի ու ո՛չ ալ վերջ:

Ուրիշ երկու անձեր ալ գտնուեցան Յիսուսի մահուան ժամանակ, որոնք դարձան առարկայական ու տեսանելի *հոգիով աղփատներ*:

Դատապարտեալ և հերձուածող Նազովրեցի Մարգարէն, որ մատնուեցաւ ու դաւաճանուեցաւ իր գանձապահին կողմէ, ուրացուեցաւ ամենաբաշ ու հաւատարիմ կարծուած Պետրոս աշակերտէն ու լքուած մնաց խաչին վրայ երկու աւազակներու միջեւ, գտնուեցան միայն երկու մեծահարուստներ, որոնք ո՛չ անխիղճ ու ո՛չ կեղեքող էին: "Հոգիով աղփատ" այս հարուստները իրենք զիրենք նոյնացուցին այս անարգուած Դատապարտեալին հետ առանց զգալու նուաստութիւն կամ անարգանք: Այս հարուստները ցոյց տուին իրենց սէրը, համակրանքը և հաւատարմութիւնը հանդէպ Դատապարտեալին ու խնդրեցին Պիղատոսէն որ թաղեն Անոր Մարմինը ըստ իրենց՝ Հրէական հաւատքին: Ի՛նչ փառութիւն և վեհանձնութիւն ցոյց տուին այս հարուստ նիկողիմոս և Յովսէփ Արիմադացին: Ո՞ւր էին անօթի աղփատները, որոնք կերակրուած էին Յիսուսի ձեռքով, ո՞ւր էին աղփատ կոյրերն ու կաղերը, որոնց Յիսուս բժշկած էր:

Մի միայն այս երկու *"հոգիով աղփատներն"* էին, որ իրենց հարստութիւնը վտանգեցին, որովհետեւ ծանչցած էին Ճշմարիտ հարստութիւնը՝ Յիսուս Զրիստոսը: Իրենց փորձառութեամբ ու կամփով ու ոչ փաստարկութեամբ դարձած էին "հոգիով աղփատ":

Ա՛յս է "հոգիով աղփատութիւն"ը: Այս երկու հարուստները ոչ թէ ուրացան Յիսուսը պաշտպանելու համար իրենց կալուածներն ու դրամը, այլ՝ ուրացա՛ն հարստութեան ժխտական ուժը, որ կործանիչ է, կողոպտիչ է և մահացո՛ւ: Ու նուիրուեցան, նման Յիսուսի, դրական հարստութեան որ սիրե՛լ է, կարեկցի՛լ է, տա՛լ է ու նաեւ տրուիլ:

Ապրի՛ այդ հարստութիւնը և հարուստը, որ "հոգիով աղփատ" է վասնզի Աստուծոյ արքայութիւնը անորն է:

Սեպտ. 14, 1987

“ԵՍ ԵՄ ԱԼՖԱՆ ԵՒ ՕՄԵՂԱՆ”

Ի՞նչ կը կարծուի ըլլալ վերի խորագրին խորքն ու իմաստը: Ի՞նչ կը ներկայացնեն ու կը յիշեցնեն «Ալֆա և Օմեղա» բառերու հանգամանքը: Ալֆան և Օմեղան աստուածապարզեւ գիրերն են մարդոց, անհրաժեշտ, որպէսզի այն ինչ որ միտքը կը պատկերացնէ ուղեղին, գիրը թանձրացնէ և տեսանելի դարձնէ զայն համայն մարդկութեան: Նախապատմական շրջաններուն, գիրը անհրաժեշտութիւն և հարկաւորութիւն դարձաւ տեսանելի դարձնելու համար Աստուծոյ պատուիրանները մարդոց: Գիրը՝ մարդկային հաղորդիչն է ու պահպանիչը անոր խորհուրդին իսկութեան: Քարերով, գիծերով, գոյներով, մագաղաթով, թուղթով և անոնց շունչ տուող ձայնով ու գիրով, մարդկութիւնը ջանաց յաւերժացնել իր մտածումները, անցեալի աւանդութիւնը, մշակոյթը և իր ինքնութիւնը: Սերտելու ու թափանցելու ենք ոչ միայն այն ինչ որ գիրերը ցոյց կու տան, այլ՝ անոնք իրենց ցուցմունքով, ի՞նչ ըսել կ’ուզեն մեզի: Ամէն գիր ու գրականութիւն պէտք են նպաստել ճշմարիտ բարիքին ու երջանկութեան, նկարագրին ու բարիի կերտումին:

Եկեղեցւոյ «գիր»-ին ու «գիրք»-ին, «աղօթք»-ին ու «խունկ»-ին, ալեխոով ալիք»ներուն և անգիր խորհուրդներուն մէջէն կու գայ **«ԵՍ ԵՄ ԱԼՖԱՆ ԵՒ ՕՄԵՂԱՆ»** ֆաղցրասրինգ մեղեդին ու կը դպչի մեր իւրաքանչիւրին սրտի ու խորհուրդի թելերուն: Հրաշագործ է գիրը որ կու գայ դարերու խորքէն, կը կամրջէ մեզ անցեալին հետ ու կը փոխադրէ մեր մտածումները դէպի ապագան:

Մեծ դժբախտութիւն է տեսնել Աստուծով մարմին առած գիրքերը, որոնք նետուած են հոս ու հոն: Ներէ՛ ով Տէր, որ Քու գիրդ և բացայայտութիւնդ մառախլապատ կը տուայտի: Մտքի մեր վերասլաց խորհողութիւնը պիտի գոյատեւէ ու հասնի իր կատարին, երբ գիրին ու գիրէն անդին *հոգեկան* բխումներու ծառագայթումով, սրբազան յոյսի և լոյսի ծամբով թափանցենք, գիրին ետին ֆօղարկուած իսկութեան և իրա՛ւ խորհուրդին:

Յիսուս Քրիստոս որեւէ գրական յիշատակութիւն մը չթողուց աշխարհի: Ինչո՞ւ: Որովհետեւ Ան ուզեց որ Իր յաջորդները, Ձինք սիրողները մասնակից ըլլան Իր առաքելութեան: Յիսուս գիրք մը չգրեց, Ինքզինքն տուաւ՝ Ի՛նք դարձաւ կենդանի Խօսքն ու Գիրը: Յովհաննէս առաքեալ աքսոր-բանտարկութեան շրջանին, Հոգին իր վրայ կու գայ ու կ’իմանայ ձայն մը որ կ’ըսէ իրեն.

«Մի՛ վախնար, ես եմ Ալֆան և Օմեղան, Առաջինը և Վերջինը, Սկիզբը և ես եմ Վախճանը. ես եմ կեանքը և ես եմ որ մեռայ, և ահա կենդանի եմ յաւիտեանս և Յաւիտենից:...Գրէ՛ ինչ որ կը տեսնես, ինչ որ կայ և ինչ որ այսուհետեւ սահմանուած է որ ըլլայ»-Յայտ. Ա.10, 17-19:

Ի՞նչ կը նշանակէ *«Ալֆա և Օմեղա», Սկիզբը և Վախճանը»:* Աստուծոյ ան-սկիզբ սկզբնաւորութիւնը չենք կրնար հասկնալ, որովհետեւ մենք, մարդ արարածներս, *սկզբնական* էակներ ենք: Ս. Գրիգոր Նարեկացին իր հոգիի և զգացումներու ոսկի բուրվառին մէջ անուշահոտ կնդրուկի նման կ'երգեհոնէ իր խորհրդածութիւնները, ըսելով. *«Անբովանդակելի բնութիւն, անսկիզբ և անճառելի Մեծութիւն* ելլն: Ս. Ներսէս Շնորհալի իր հոգեկան խորհրդածութիւններուն մէջ ըսած է. *«Աստուած՝ Ինքն անպատճառ, Պատճառ ամենայն պատճառաց»:*

Խաչատուր Տարոնացի ԺԳ Դարու սկիզբը եղած է բանաստեղծ և երաժշտագէտ: Աստուածախօս երաժշտական ծաշակէ հմայուած, ան ինքնատիպ բանաստեղծութեամբ կոչած է զԱստուած.

«Խորհուրդ Խորին, Անհաս ու Անստեղծ»:

Անստեղծ ու նախասկիզբ Աստուած յայտնաբանած է Ինքզինք տիեզերքի գոյացութեան մէջ Իր արարչագործութիւններով՝ մայր բնութեան աստուածահրաշ արդիւնաբերութեամբ, կարգ կանոնով ու գեղեցկութեամբ:

Աստուածաստեղծ մարդ արարած կարիքը ունէր ոչ միայն մայր բնութեան հրաշագեղ զարդաբանականներուն, այլ նաեւ հաւատալոյս Իրականութեան՝ Արարչին, որ իր տեսանելի ու շօշափելի ֆիզիկականէն դուրս ու անդին է: Աստուածակերպար մարդ նախապատմական դարաշրջաններէ սկսած, հետազօտութեան մէջ է գտնելու և ծանչնալու իր նախատիպը, իր գոյութեան պատճառը, զինք գոյացնող Արուեստագէտը և իր գոյութեան *նպատակը*:

Սոյն մարդկային որոնումին պատճառաւ, աստուածութեան Ինքնաբացայայտում՝ Յիսուս Քրիստոս մարմնացաւ և ըմբռնելի դարձուց "Խորհուրդ Խորին, անհաս և անսկիզբ" Աստուածութիւնը մարդ էակին:

«Ալֆա և Օմեղա» աստուածային թանձրացեալ և Մարդեղեալ բացայայտումն է, որ (Հայ եկեղեցին Յիսուսի Սուրբ Ծնունդը կը կոչէ՝ Աստուածայայտնութիւն):

Ինչո՞ւ Յիսուս Քրիստոս կը կոչուի *Ալֆա և Օմեղա*: Ծատ

իրաւացի հարցում մըն է: Բոլոր անոնք, որոնք զաւակներ ունեցած են պիտի կարենան հասկնալ յետագայ բացատրութիւնը: Մեր զաւակները, խօսիլ չսկսած, դժուար էր զանոնք ծանօնալ: Իրենց մտածումները և խորհուրդները միշտ ներկայ եղած են անոնց մէջ նոյնիսկ ի ծնէ, սակայն մեզի անծանօթ կը մնար անոնց ի՞նչ *խորհիլը*: Ինչո՞ւ, որովհետեւ անոնք չէին *խօսեր*: Անոնք կու լային, կը խնդային, կը կակազէին, մատով ցոյց կու տային և կը ճչային ու մենք չէինք հասկնար զիրենք: Իսկ երբ երախան խօսիլ սկսաւ ու բացատրեց իր միտքը, իր փափաքները և իր զգացածները, իր ծնողքը հասկցա՛ն իրենց արիւնակից ու հարազատ զակին տենչանքը: Մեր ըմբռնումի հասողութիւնը ո՛չ թէ մեր զակին մտքին ու խորհուրդին *ամբողջութիւնն* է, այլ միայն անոր արտայայտած ու *խօսած* բառերո՛ւն իմաստն է:

Նոյնպէս ալ Յիսուս Զրիստոս՝ Բանն Աստուծոյ-ն է՝ Աստուծոյ կենդանի՝ Խօսքը, Աստուծոյ արտայայտած Ինքնաբացայայտումն է, Կենդանի ապրուած կեանքի զոհողութեան, նուիրումին և սիրոյն: Ինչպէս որ մեր զաւակներուն խօսակցութենէ՛ն, անոնց բառերու շեշտէ՛ն կը հասկնանք անոնց իղձերն ու փափաքները, նոյնպէս ալ կ'ըմբռնենք ու կը հասկնանք զԱստուած, Յիսուս Զրիստոսի *ապրումէ՛ն*, Անոր Բաղցր *խօսելաձեւէն*, հեզահամբոյր մօտեցումէն, ախորժալի *մտերմութենէն*, մեղմանուշ թելադրութիւններէն, կեղծաւորներուն հանդէպ արդարակորո՛վ ձաղկումէն ու ստախօսներուն հանդէպ Իր ցոյց տուած կծու Բննադատութիւններէն:

Յիսուս Զրիստոս աստուածայայտնութեան մի միայն Ալֆան և Օմեղան չէ՛, այլ այդ երկու գիրերու միջեւ գտնուած բոլո՛ր տառերունն ա՛լ: Որովհետեւ երկու գիրով ոչ խօսք կրնայ գրուիլ ու ոչ ալ միտք կրնայ արտայայտուիլ: Մտքի, խորհուրդի ու մտածումի լրիւ արտայայտութիւնը կը կարօտի այբենգիմի բոլո՛ր գիրերուն:

Ալֆա և Օմեղա գիրերը յիշեցնելով, մեր Տէրը բացայայտել կ'ուզէ աստուածայայտնութեան *գործընթացքին* բոլո՛ր տեսողութիւնը ու ո՛չ միայն սկիզբն ու վերջաւորութիւնը: Այլ խօսքով, աստուածային Մարդեղեալ Անձնաւորութիւնը կը ջանայ ցոյց տալ Աստուծոյ *հոգատարութիւնը* հանդէպ տառապակոծ մարդկութեան: Մարդկութեան ողբերգութեան տրաման ապրած Յիսուս, մեղաւորն ու մաքաւորը եղեմէն չի՛ վտարեր, այլ՝ երկնքի խորութիւններէն կը ձայնէ, ըսելով.

«Եկէ՛ք ինձի, բոլոր յոգնածներ և բեռնաւորուածներ (մեղաւորներ) և ես պիտի հանգստացնեմ ձեզ»--Մատթ. ԺԱ. 28:

Բարեգութ ու ողորմած Քրիստոս, փոխանակ մահուան դատապարտելու մեղաւոր պոռնիկը ու խայտառակելու զայն, կ'ըսէ անոր.

«Ո՛վ կին, (ոչ շնացող մեղաւոր) ո՞ւր են. ո՞չ ոք դատապարտեց քեզ»:

Դաւկահար ու դողահար մեղաւորը, իր ամօթէն, չէր կրնար երեսն անգամ ցուցնել, և կմկմալով կ'ըսէ Յիսուս Մարգարէին. *«Ո՛չ ոք, Տէ՛ր»:* Ծնրադիր, արցունքահոս, զղջացող կնոջ, կը դառնայ Յիսուս՝ ճարտարապետը մարդկային արարչագործութեան, կը տեսնէ ապաշխարող մեղաւորին տանջահար հոգին ու Իր անսպառ ողորմութեամբ կ'ըսէ.

«Ես ալ չեմ դատապարտեր քեզ, գնա՛յ, այսուհետեւ մի՛ մեղանչեր»--Յով. Ը. 11:

Գիւղէ գիւղ ծամբորդութեան մը ընթացքին, Յիսուս ականատես կ'ըլլայ խեղճուկ յուղարկաւորութեան մը: Իր աչքին սեւեռումէն չկորսուիր որբեւայրիի մը տխուր ու արցունքահոս աչքերուն լացը: Յաւերժաւանդ Խորհուրդ Յիսուս կը կեցնէ թափօրը, ու Իր լուսեղէն Ձեռներու կենարար զօրութեամբ կեանքի՛ կը կոչէ մահուանէ առեւանգուած պատանին ու կը յանձնէ զայն որդեկորոյս մօր, որուն միակ յոյսը, աչքին լոյսը ու հացին աղբիւրն էր ան:

Աշնան գեղեցիկ օր մը երբ անհամար մարդիկ չէին ուզած հեռանալ Նազովրեցի Մարգարէին աստուածածորան խօսքերէն և բժշկութիւններէն, Յիսուս նշմարեց *անօթիները*, ոչ միայն Իր ֆարոգութեանը, այլ նաեւ մարմնապահանջ հացին: Իրիկուան դէմ, աշակերտները մօտեցան իրենց Վարդապետին և ըսին *«Այս տեղը ամայի է, և օրն ալ յառաջացած, արձակէ ժողովուրդի այդ բազմութիւնը, որպէսզի չըջակայ գիւղերը երթան և իրենց համար ուտելիք գնեն»:*

Յիսուսի ողորմած ու գթասիրտ հոգին ըսաւ աշակերտներուն, երկու հազար տարի առաջ, ու կրկին կ'ըսէ ա՛յսօր քեզի և ինձի.

«Պէտք չկայ որ անոնք երթան, դո՛ւք անոնց ուտելիք տուէք»--Մատթ. ԺԴ. 15-16:

Չեմ ուզեր մեկնաբանել այբենգիմին բոլոր գիրերը, որովհետեւ հասկցողին համար վերոյիշեալները բաւարար են: Սակայն կը փափաքեմ յիշեցնել, սիրելի ու յարգելի ընթերցողին, թէ

Աստուծոյ Ալֆան և Օմեղան խորհրդանիշն է նաեւ Անոր ամբողջական՝ զոհողութեան սիրոյ զգացումի խորութեան, որ առանց ցաւի ու արցունքի չէր կրնար իրականանալ: Խաչեցեալին անսպառ զգացումի ջերմութիւնը, մարդկային երեւակայութեան թափը ու գաղափարներու խորութիւնը կը գերազանցէ: Սոյն դէպք իրողութիւնները կու գան ապացուցանելու մեզի, թէ Աստուածային *հոգատարութիւնը* ո՛չ թէ միայն հեռաւոր մշուշապատ *սկիզբ* ու ապագայի *անըմբռնելի պատահականութիւն* մըն է, այլ ներկային՝ մեր առօրեային ալ *հոգատա՛րն* է Աստուած Ճշմարիտը:

«Ան որ է-ն է և որ է և որ պիտի գայ, Ամենակալը»

--Յայտ. Ա. 8:

Աստուածային էութիւնը միայն *սկիզբ* մը և *վախճան* մը չէ՛, այլ՝ *ամբողջականութիւն* մըն է՝ այնպէս ինչպէս Ալֆա-ի և Օմեղա-ի միջեւ գտնուած բոլոր գիրերն ալ են: Աստուծոյ մատնագրութիւնը ըմբռնելու և անոր բովանդակութիւնը հասկնալու համար, ընթերցողէն կը պահանջուի հոգեւոր ուժերու բացառիկ սեւեռում: Մարդկային կեանքը առանց զոհողութեան, չի կրնար ըլլալ ճշմարտօրէն մարդկային և վաւերականօրէն ֆրիստոնէական: **Խաչը** մեր գոյութեան հետ շաղախուած դէպք և իրողութիւն դառնալու է:

Սէրը կը հերոսանայ, հաւատքը կը սրբանայ, իսկ *զոհողութիւնը* կը դիւցազնանայ: Ուստի ապրի՛նք այս յոյսով, վստահութեամբ ու լաւատեսութեամբ: Մեր Աստուած Ճշմարիտը մարդկութեան ամբողջականութիւնո՛վը՝ ֆիզիքականո՛վ, իմացականութիւնո՛վ ու հոգեկանութիւնով կը հետաքրքրուի ու կը հոգայ զանոնք:

Օգոստոս 23, 1994

Թորոնթօ

ՀԱՒԱՏԱԼ Ե՛Ւ ՏԱՌԱՊԻԼ

Ստեղծագործ և կենսատու երկու բեւեռներ կան, որոնք կը բխին նուիրումի, զոհողութեան ու տառապանքի հոգեկան ապրումէ: Այս կենդանարար ապրումի առանձնաշնորհը կու գայ երկնառաք կոչումէ, որ կարելիութիւնը կ'ընծայէ ենթակային դառնալ աստուածաման:

Հարեանցի ակնարկով ու անձնասիրական տրամադրութեամբ որքա՛ն անիմաստ և խորթ կը թուի "տառապանք"ը *զօղել* "հաւատք"ի հետ: Բնական մարդը (անձնակերպողն ու անկարեկիր) հողաշէն ու նիւթեղէն յօրինուած էակը, նախ քան ստանալը աստուածային շունչ, ներզօրութիւն, լուսաւորութիւն ու բանականութիւն, անկարելի էր որ կարենար տեսնել տառապանքին ու ցաւին ստեղծագործ գերզօրութիւնը:

Անհատներու և ազգերու, Աստուծոյ դէմ կասկածի և ըմբոստացումի գլխաւոր պատճառներէն մին, եղած է մարդկային ցաւն ու տառապանքը: Նոյնիսկ մեր ազգային հարազատ բանաստեղծներն իսկ, յաճախ հարց տուած են ըսելով. *«Ո՞ր էր Աստուած Մեծ Եղեռնի պահուն:*

Հարցումը տեղին է և արդար: Որովհետեւ *մարդկայի՛ն* մտածումն ու խորհրդածութիւնը կարելի չէ զսպել կամ սանձահարել: Լեզուն կարելի է հնազանդեցնել, սակայն *միտքը* ո՛չ: Ինչո՞ւ, որովհետեւ մարդկային միտքը՝ աստուածային այն կայծն է, որ մարդ էակը կը զատորոշէ ուրիշ արարածներէն: Միտքն ու մտածումը, մարդու շնորհուած գրաւականն է, որ ինք կը պատկանի Արարիչ Աստուծոյ: Մարդկային միտքը անկապտելի է: *Աստուած մեր միտքը չսանձահարեր, այլ կը լուսաւորէ՛:* Մեզի դողած է բնորոշելը ու կշռադատելը:

Յիսուս Քրիստոսի բացայայտած հաւատքի ու տառապանքի նորայայտ իրադարցութիւնը, քրիստոնէական հարուստ իմաստին մէջ, ըմբռնելու համար, մարդ կարիք ունի հոգեկան յափշտակութեան: Ինչո՞ւ, որովհետեւ հեթանոսական դարերու անիմանալին և անըմբռնելին՝ Քրիստոսի սրբարար **Խաչելութեա՛ն** լոյսին տակ ըմբռնելի կը դառնայ:

Մարդկային հոգին այնքա՛ն բարդ է ու բազմակողմանի անոր ըմբռնումներու, ապրումներու ձեւերն ու կերպերը, որ անոնց իրաքանչիւրը իր արտայայտութեան լեզուն և առանձնայատկութիւնները ունի: Հետեւաբար արդի դարու հաւատացեալ մը

Քրիստոսի՝ ծշմարտութեան լուսամուտէն դիտելու է ըմբռնելու համար աստուածային շնորհը և Յիսուս Քրիստոսի յաւերժաբոյր խօսքերը, երբ Ան խօսեցաւ տառապանքի մաքրագոյնիչ ու բիրեղացուցիչ հաւատքին մասին.

«Յիսուս սկսաւ յստակօրէն յայտնել աշակերտներուն, թէ պէտք է որ Ինք Երուսաղէմ երթայ, շատ չարչարանքներ կրէ քահանայապետներէն, դպիրներէն, ժողովուրդի ծերերէն. և սպաննուի ... »:

Հաւատքի ժայռահիմն՝ Յիսուս Քրիստոսի խօսքերուն մէջ հերոսանալու հեթանոս պայքարամարտի գաղափարը չկայ, այլ կա՛յ Իր առաքելութեան նուիրումն ու հաւատարմութիւնը, որոնք ո՛չ պարագայական են ու ո՛չ ալ շահադիտական: Երկնային Պատգամաբեր Մեսիան կը զոհաբերէ Իր Անձը մարդկութեան համար ու Իր Կամօք կը նուիրէ Հօր Աստուծոյ հանձարեղ Կամեցողութեան: Երկնաբաշխ Սիրոյ արիութիւնը իր լրումին հասցնելու համար անհուն Զգաստութիւն՝ Յիսուս կ'ընդառաջէ և կը յօժարի տառապիլ, անարգուիլ ու անարդարօրէն մահուան դատապարտուիլ:

Անձնամատոյց Յիսուս երբ կ'ըսէ. **«Ես եմ Ճամբան»:** Ան ըսել չուզեր թէ Իր Ճամբան սալայատակուած է ոսկիով ու լուսազարդուած արդի ելեկտրական լոյսերով, այլ Իրեն հաւատա՛լ ու Իրեն հետեւիլ իր մէջ կը պարփակէ տառապանք, ցաւ ու զոհողութիւն: Ոչ թէ սուրով ու զէնքով եղած հերոսութիւն, այլ *անձնազոհութեամբ* ու անձնուրացութեամբ կատարուած հերոսութիւն: Քրիստոսի Ճամբան այն վերելքն է, որ մարդ էակը կը բարձրացնէ անասնութենէ դէպի աստուածանմանութիւն, նիւթեղէնէ դէպի հոգեղէն և ժամանակաւորէն դէպի յաւերժութիւն:

Աստուած անֆննելի Իսկութիւնն է ու անհասանելի մարդկային պարզ հետաքրքրութեամբ, որովհետեւ Ան սուրբ է ու երկնային անդիմադրելի Զօրութիւն: Ան, մարդկայինը՝ գերմարդկայինի կը վերածէ, կաւը՝ լոյսի, տկարութիւնը՝ զօրութեան: Աւելի խորապէս կարելի է երեւակայել զԱստուած, քան թէ բացատրել, և ալ աւելի իրապէս գոյ է Ան, քան թէ կրնանք երեւակայել Զինք: Մարդը՝ Աստուծոյ լծակցութեամբ միայն կրնայ իր կոչումը իրագործել այս աշխարհի վրայ:

Վերոյիշեալ անըմբռնելի Ճամբան հասկնալն ու գիտնալը հոգեկան և փորձառական վարժութիւն կը պահանջէ: Ողիմպիականի մրցորդ մարզիկներ հանգստաւէտ ու դիրակեաց Ճամբով չէ՛

որ կը հերոսանան և կը խլեն դափնեպսակներ, այլ անդուլ և յարատեւ աշխատանքով, երբեմն վիրաւորուելով իսկ և ֆիզիքական ցաւեր փաշելով աննահանջօրէն կ'արշաւեն դէպի իրենց նպատակակէտը:

Դիտենք բնական մարդը, աշակերտող հաւատացեալ մը, սակայն *յաւակնոտ* հաւատացեալ մը, որ չէ մերկացած իր հին նախապաշարումներէն՝ հեթանոս մտածումներէ: Այս աշակերտը կը ներկայանայ մեզ Աւետարաններուն մէջ որպէս Պետրոս՝ մէկը տասներկու ընտրեալներէն: Յիշողութեան արժանի դրուագը, Պետրոս առաքելի մէկ տխուր և սակայն փոքր երեսակներէն մին է, բազմաթիւ հաւատացեալներու կեանքէն ներս ու պատճառ դարձած եկեղեցիներու ուժացման ու անտարբերութեան: Պետրոս աշակերտի հատուածական այս միջադէպը հետեւեալն է: Ան կը ներկայացնէ ընդհանուր հաւատացեալները: Ան կ'աճապարէ իր դատողութեան մէջ, իբր թէ կ'ուզէ խրատել Յիսուս Վարդապետը ու կը սկսի վիճիլ Անոր հետ ըսելով.

«Քաւ լիցի բեզ, Տէ՛ր, այդ բանը բեզի չի պատահիր»:

Յիսուս նախապէս սկսած էր յստակօրէն յայտնել աշակերտներուն, թէ պէ՛տք է որ Ինք Երուսաղէմ երթայ, շատ չարչարանքներ կրէ ֆահանայապետներէն, դպիրներէն, ժողովուրդի ծերերէն և սպաննուի ու երրորդ օրը յարութիւն առնէ: Երբ Պետրոս կ'ընդդիմանայ Յիսուսի, մեր Տէրը դառնալով Պետրոսին կ'ըսէ.

«Ետի՛ս գնա, Սատանա՛, դուն գայթակղութիւն ես ինծի համար, որովհետեւ քու մտածումներդ Աստուծոյ մտածումները չեն, այլ՝ Մարդոց»

Մատթ. ԺԶ. 22-23:

Յիսուս Քրիստոսի ամենասքանչելի խօսքերէն մին հետեւեալն է. **«Քու մտածումներդ Աստուծոյ մտածումները չեն»:** Ի՛նչ խորհրդապաշտական (միստիկ) արտայայտութիւն: Ի՛նչ հսկայ տարբերութիւն կայ *բնակա՛ն* մարդու և Մարդեղեալ Յիսուսի մտածումներուն միջեւ: Ահաւասիկ շողշողուն տեսլական մը, գեղազմայլ մտատիպար մը և հմայագեղ ծանապարհ մը, որ ուղղութիւն կու տայ *բնական* մարդուն ստանալու տեսիլք, որ աստուածային է և ստեղծագործ:

Այսպիսի ելարան մըն է, որ մագլցեցան այն սուրբերը, որ Հայ

մատենագրութեան մէջ կը կոչուին Նարեկացիներ, Ծնորհալիներ Մեսրոպներ, Լուսաւորիչներ, Սանդուխտներ և Ծուշան Վարդենիներ: Վերոյիշեալ սուրբերուն նախա-աշակերտը եղած էր Պօղոս առաքեալ, որ նախ քան իր հրաշունչ քարոզութիւնները ու վարակիչ սիրոյ շատրուան նամակագրութիւնը, ինքզինք մեկուսացուցած էր աշխարհէ ու իր բարեկամներէն: Ան դարձած էր անապատականը Արաբիոյ կիզիչ անապատներուն մէջ ու քանի մը տարիներ հսկումով ու աղօթով ստացաւ քրիստոնէական վերածնունդ, ո՛չ թէ *բերանացի*, այլ *կենցաղավարական*:

Ահա թէ ի՛նչ կը մտածէ Պօղոս առաքեալ երկու տարի Արաբիոյ քարանձաններուն մէջ խոկալէ և Յիսուսի հետ դէմ յանդիման զրոյցներ ունենալէ յետոյ.

«Վասնզի ձեզի տրուեցաւ (շնորհուեցաւ) Քրիստոսի համար՝ ոչ թէ միայն անոր հաւատալ, հապա Անոր համար չարչարուիլ ալ»--Փիլ. Ա. 29:

Առաքեալին աստուածաշնչեալ բռները նորանշան լուսամուտ մը, երկնագեղ հայեացք մը և Յիսուսահմայ մտածում մըն է, որ կը գերադասէ մարդկային, եսասիրութիւնը և անձնապաշտութիւնը: Սուրբ նպատակի և սիրոյ համար եղած ցան ու տառապանքը *ստեղծագործութիւն* է և արարչագործութիւն մը անհատի հոգիէն ներս:

Ս. Գրիգոր Պահլաւունիի 13 տարիներու տառապանքն էր Խոր Վիրապին մէջ, որ դարձի բերաւ Տրդատ Թագաւորը, Հայ պալատականները և Արարատեան ժողովուրդը կանգնեցուց լուսաւորութեան ծանապարհին վրայ: Սուրբ կոյսերու և վանականներու աննահանջ մարտիրոսութիւնն էր, որ մարդկային *բնական* մտածումի դռները խորտակեց և ցոյց տուաւ լուսապաժառ մտածումը Յիսուս Քրիստոսի: Գողգոթայի ահարկու որոտումներու և կայծակնաբոց փայլատակումներու լոյսին ու փոթորիկներուն տակ լսուեցաւ Հօր Աստուծոյ սիրոյ կանչը Իր Միածնի տառապակոց շրթներէն ու խաչին նախատինքն ու անէծքը փոխակերպեց յաւերժաբոյր փրկութեան, երբ յոյնն ու հրեան, հեթանոսն ու հռոմայեցին լսեցին.

«Հա՛յր, ներէ՛ ատոնց. որովհետեւ չեն գիտեր թէ ինչ կ'ընեն»:--Ղուկ. ԻԳ. 34:

Ահաւասիկ հաւատքի ծանապարհը որ զուգորդուած է տառա-

պանֆի, ցաւի և նուիրումի, որ կը տանի հաշտութեան, փրկութեան և յաւիտենական կեանֆի:

Մարդկութեան ներկայ գոյութիւնը արգասիֆն է *աստուածայի՛ն* տառապանֆին ու ցաւին: Հետեւաբար մարդկային անհատական և համազգային տառապանֆն ու ցաւը արժանիֆ մը պիտի դառնայ անհատին, ընտանիֆին և ազգային յաւերժութեան, երբ այդ տառապանֆը *լծակցութիւն* մը *մասնակցութիւն* մը դառնայ Արարիչ Աստուծոյ սուրբ և ծննդագործող տառապանֆին:

Սեպտեմբեր 21, 1987

Թորոնթօ

ՀԱՅԸ ԻՆՉՈՐԻ ԶԷՆՔ ՎԵՐՑՈՒՑ

Անցեալները երբ պեղումներ կը կատարուէր St. Catharine-ին Ont. դաշտագետիններուն մէջ, հոն գտնուեցան մօտ 20 մարդկային անթաղ կմախֆներ: Հնախոյզեր անմիջապէս եկան ֆննելու և հասկնալու, թէ ովքեր էին այդ կմախֆներու տէրերը: Անոնք տեղեկացան, այդ կմախֆներու ֆով գտնուած բաճկոններու կոճակներէն, թէ այդ զինուորները Ամերիկեան բանակի պարտուած և նահանջող զինուորներու ինկած մարմինները պէտք է եղած ըլլան: Մեծ շուքով և պատիով, Ամերիկեան կառավարութիւնը փոխադրեց այդ կմախֆները Միացեալ Նահանգներու ազգային գերեզմանատունը:

Հայաստանի իւրաքանչիւր քարին տակ կը հանգչի հայ-ֆրիստոնեայ նահատակ մը որուն զէնքն ու նիզակը գործածուած էր մի միայն պաշտպանելու իր ֆրիստոնէական հաւատքը ու հայրենի հողերը, որ կարտադրէր իր մանանայաբոյր ցորենն ու կեանքի հացը:

Հայ նիզակն ու սուրը արիւն չթափեցին *Ժաւալապաշտական* ֆաղափականութեան համար: Հայ մկանը չմարգուեցաւ ասպատակելու համար ուրիշին հացը: Հայ զինուորը կամաւոր չ'արձանագրուեցաւ իր դրացիին հարսն ու աղջիկը բռնաբարելու համար: Հայ զինուորը Վարդանագոյն արիւնով մկրտուեցաւ ու նահատակուեցաւ, որ արգելք ըլլայ մինարէներու կառուցման Սուրբ Էջմիածնի շուրջ: Հայ զինուորը նահատակուեցաւ, որպէսզի իրեն յաջորդող հարազատները երգեն «Սուրբ Սուրբ»ը և «Տէր Ողորմեա»ն փոխանակ կանչելու "Ալլահու Ագպար"ը: Հայ զինուորը դիւցազնացաւ, որովհետեւ փոխանակ երկրպագելու կրակի բոցին, ան երկրպագեց այդ կրակին Ստեղծիչը և Արարիչը Լոյսին:

Օգոստոս 13, 1994

Թորոնթօ

ՀՈԳԵԿԱՆ ԹԷ ՖԻԶԻԲԱԿԱՆ

Հոգեկանը՝ իր զանազան իմաստներուն մէջ, գլխաւորաբար կը ներկայացնէ բարձրագոյն արտացոլումը կամ կերպարը իր Արարչին: Հոգեւորին գլխաւոր յատկանիշներն են գիտակցութիւնը իր շրջապատին՝ արարչագործութեան և անոր գեղեցկութիւններուն ու ենթակային ինքնագիտակցութեան, որ կ'առաջնորդէ մարդը գաղափարական՝ բարձունքներու, հերոսութեան, անձնազոհութեան և նոյնիսկ նահատակութեան:

Բոլոր դարերու իմաստասիրական միտքը զբաղած ու հետազօտած է *հոգեկան* տարածութիւնը: Մարդկային հոգին՝ իր իմացականութեամբ, իր զգացմունքով, իր երեւակայութեամբ, իր յիշողութեամբ և կամֆով կը ծախրէ հոգեկան և իմացական տարածութեան անսահման ոլորտները և որպէս կշիռ կը գործէ, կը հաշուէ, կը չափէ, կը բաղդատէ հոգեկանը մարմնականին հետ:

"Ֆիզիքական" բառով կ'ուզեմ շեշտել աշխարհիկը, նիւթապաշտական աշխարհա-հայեցողութիւնը, շրջապատի հրապուրիչ ազդեցութիւնները, դիւանագիտական և նենգաւոր լեզուները: Այն աշխարհն ու հասարակութիւնը որ առանց եկեղեցիի է, բարոյականութիւնը որ առանց կրօնփի և մարդը՝ առանց Աստուծոյ:

Այսօր մարդկութիւնը կ'ապրի վատնումի, արագութեան և եսակեդրոն աշխարհահայեացքով դարու մը մէջ: Նիւթապաշտական և մեքենական աշխարհահայեացք ունեցողներու համար, հաւատքը և հոգեկանը զառանցանք են, իսկ հաւատաւորի մը համար՝ կեանք են, զօրութիւն և փրկութիւն:

Մակերեսապաշտութիւնը, շռայլակեցութիւնը և հանգստաւետութիւնը կրնանք կոչել նիւթապաշտութիւն և աշխարհակենցաղավարութիւն: Ինչո՞ւ, որովհետեւ վերոյիշեալ հանգամանքները կարելի են իրագործել առանց յոգնութեան և ծիգի: Օրինակ, գլտորուիլը և իյնալը աշխատանք մը չեն պահանջեր, իսկ վեր բարձրանալը կամ օդին մէջ թռչիլը ուժի և սպառումի կը կարօտին: Երբ ֆիզիքականն ու աշխարհիկը "նիւթապաշտական" պարունակի հայեցակէտէն հանելով "մարմնական" պարունակին մէջ դասեմք, նիւթականի հանգամանքը բոլորովին տարբեր բնոյթ մը կը ստանայ: Այսինքն իրար կը լրացնեն կամ զիրար փոխազդեցութեան կ'ենթարկեն:

Հին յոյն մտածողութիւնը կը հաւատար երկու աշխարհներու, մին՝ ներկայ առարկայականը, որուն մէջ կ'ապրինք և երկրորդ, իրական աշխարհը (հոգեւոր), որուն մէջ իսկականն ու ճշմարիտը կը

գերազանցեն նիւթականի գիտակցութիւնը և ըմբռնումը: Յոյն իմաստասիրութիւնը չէր կրցած գտնել այն ծանապարհը (Յիսուսի) որ զիրենք, պակասաւոր և մեղանջական աշխարհէն (մեղքի խղճահարութենէն), կամրջէր դէպի հոգեկան և վսեմ ծանաչումին՝ ապրումներու և սրբութեան ըմբռնումներուն: Կատարեալ և գեղեցկագոյն օրինակը, այս աշխարհին մէջ միշտ թերի կը նկատուէր: Յիսուս Քրիստոսի աստուածայտնութեամբ, աշխարհ ծանջցաւ թէ գերագոյն և ծայրագոյն նախատիպը բոլոր օրինաճեւերուն և ճշմարտութիւններուն՝ Աստուած Ի՛նքն է:

«Յաւիտենական կեանքը այս է՝ որ ծանջնան Քեզ միակ ճշմարիտ Աստուած, և ծանջնան Յիսուս Քրիստոսը, զոր դուն ղրկեցիր»--Յով. ԺԷ. 3:

Ինչպէ՞ս կ'ըմբռնուին հոգիի և ֆիզիքականի՝ գաղափարականի և մարմնականի փոխազդեցութիւնները:

Օրինակ, շոգեկառփի ուղեւորութեան մը ընթացքին, դասակարգային ծամբորդութիւն կայ՝ առաջին, երկրորդ և երրորդ կարգի: Երրորդ կարգի ծամբորդները կը նստին փայտէ կարծր նստարաններու վրայ և բնաւ գաղափարն իսկ չունին առաջին կարգի հանգստաւետութեան, ճաշարանի սպասարկութեան և երաժշտական կամ շարժանկարի մատուցման:

Կեանքի ուղեւորութեան ընթացքին եւս, կարգ մը մարդիկ չունին փորձառական իմացումը հոգեկանին և մարմնականին փոխազդեցութիւններուն: Բազմամիլիոն մարդկային կեանքի ուղեւորները երրորդ կարգի ծամբորդներ են: Բաժնուած, հոգեկանէ, անջատուած գաղափարականէ և իտէպէ հեռացած ապրումներ են միայն: Արարիչ Աստուած, մարդ էակը երրորդ կարգի ծամբորդ չէ՛ ստեղծած, այլ գերագոյն կարգի արարած մը: Դժբախտաբար մարդ՝ ի՛նք, իր ազատ կամքով կամ տգիտութեան պատճառով կ'ընտրէ և կ'որոշէ երրորդ կարգի ծամբորդը ըլլալ:

Աստուածաբաշխ գիտակցութիւն տրուած է մարդուն, որ ի՛նք իր ազատ կամքով ընտրէ ու վայելէ այս աշխարհի շնորհները, օրինակ, ուտեստեղէնները: Մարդ արարած չ'ունեւր գարշելի և հոտած դիակներ ինչպէս արժիւններ կամ տարբեր գազաններ կու տեն: Մարդ կու տէ աշխարհի լաւագոյն և ընտրուած համեղ ուտեստեղէնները որ երբեք այս երկրագունտը արտադրած ըլլայ: Ինչպէս կայ մարմնական սնունդի պահանջը, կայ նաեւ հոգեկա՛ն, գաղափարական և յաւիտենական սնունդի կարիքը:

**«Լոյսը աշխարհ եկաւ, սակայն մարդիկ խաւարն
աւելի սիրեցին՝ քան լոյսը, որովհետեւ իրենց
գործերը չար էին»--Յով. Գ. 19:**

Մարդկութեան մեծամասնութիւնը, դժբախտաբար, կ'ախորժի գարշելի և հոտած դիակներէ, որովհետեւ մեծ մասը չար է ու ոմանք ալ տգէտ: Որպէս ապացոյց, դիտեցէք հեռատեսիլի ոճրասէր ու բիրտ ցուցադրութիւնները, մարմնի մերկացումները և արուեստ պիտակի ներքեւ հրապարակուած երաժշտութիւն կոչուած պոռոցներն ու վայնասունները: Կարգ մը գռեհիկ ելոյթներ, "արուեստ" բառով յարգելիութեան պատմութեան կ'ուզեն հագուիլ: Մարդկութիւնը այնքա՛ն այլասերած է, որ միայն մարմնական գրգիռը և զգացականը կը փնտռուի: Նման արժիւններու և կարգ մը վայրի անասուններու, ներկայ մարդը, կ'ախորժի միայն գարշելի և հոտած դիակներէ:

Ո՞ւր են ապրումներու սրբութիւնը և հոգեկան արժէքներ փնտռողները: Գարեգին Ա. Կաթողիկոս ըսած է.

«Հոգիին հաւատացողը, հոգիով ապրող,
հոգեկան արժէքներ ստեղծող և զանոնք
յարգել գիտցող ազգը գերեզման չունի»:

Նիւթապաշտ ներկայ հասարակութեան մէջ հաւատքի, բարոյականի և հոգեւոր արժէքներու շփոթանք մը կայ, կրօնական զգացումներու չգոյութիւն մը կայ: Արուեստի ծագման էութեան մասին մարդուն տրուած է "բացարձակ ոգիի" աստուածային յատկութիւն մը: Հոգեկան տարածութիւնն ալ նման մարմնական վարժութիւններու ընտելանալ և սորվիլ կը պահանջէ: Հաւատքն ու կրօնքը արուեստի բոլոր մարգերուն մէջ, դարձած են բանաստեղծութիւն, քանդակ, իմաստասիրութիւն կամ նկարչութիւն, գրականութիւն և գեղարուեստ: Սոյն հաւատքն ու կրօնքը նաեւ դառնալու են հոգեկան թռիչք և սլացք դէպի Արարիչ Ճշմարիտը: Մարդ երբ ունի հոգեկանի ներշնչումը, ան կ'ապրի սիրոյ անձնանուիրումի և զոհողութեան գեղեցկութեան մէջ:

Ներշնչումն ու հոգեկան խոյանքը դէպի Աստուած, մարմնականին և հոգեկանին փոխազդեցութիւնն է և կենցաղավարական փոխներգործութիւնը որ մարդը պիտի առաջնորդէ *աստուածնմանութեան*: Հաւատքի ծամբով մեզի կու գան ծաշակ, վեհանձնութիւն, յաղթանակի և սիրոյ յաւերժական խորհուրդները: Գեղեցիկ է

արտաֆին (մարմնական) աշխարհը, բայց ո՛չ պակաս գեղեցիկ է նաև մեր ներֆին (հոգեկան) աշխարհը որ պէտք է լուսաւորուի իմացական Արեգակով (Աստուծով): հոգեկանը աւելի գեղեցիկ ու աւելի *հնչազեղ* և աւելի *ախորժալուր* ու գեղահունչ է (սուրբ և անապական): Մեր սուրբ պապերը կռանեցին հաւատֆի, յոյսի, սիրոյ և յաւերժութեան տեսիլն ու պաշտամունքը, որ ոգեկան ներշնչումով կարելի է իմանալ: Կենդանիները կը փնտռեն միայն կերակուր (մարմնի գրգիռ) և ցանկութիւն, իսկ մարդ (հոգեկան և իմացական էակը) կը տենչայ գեղեցկութեան, արդարութեան, իրաւունֆի և ճշմարտութեան, որոնք շօշաֆելի ապացոյցներ են հոգեկանի և ֆիզիֆականի փոխ յարաբերութեան: Բնութեան տեսանելի գեղեցկութիւններուն մէջ ալ կ'երեւի աստուածային ֆայլը:

Աստուծոյ և մարդ արարածին միջեւ զարգացող ֆոխ-յարաբերութիւնն է, որ պիտի վերադարձնէ մարդը դէպի Եդէմական կեանֆ: Մենութեան մէջ հոգեկանն ու մարմնականը կը յարաբերին Աստուծոյ հետ ու կը հաղորդուին իրարու աղօթֆով, ուր Ոգեկանը կ'առնինֆնէ սիրտը և միտքը:

Մարդուն ֆոխյարաբերութիւնը Աստուծոյ կամֆին հանդէպ պարտ է ըլլալ սիրոյ շարժառիթէն ֆան *վախի*: Մարդ և Աստուած կը միանան ֆոխադարձ *սիրոյ* մէջ: Հաւատֆով կենսաւորուած, աղօթֆի ժամուն, հոգեկանն ու մարմնականը երբ խորասուզուին արարչականին մէջ, կ'ըմբռնեն երկնայինի գիտակցութիւնը ու կը տեսնեն ոչ միայն շօշաֆելին, այլ նաև անդենականը: Աղօթֆի և սրբութեան առջեւ բիրտ ֆարը կը խոնարհի ու կը դառնայ ԽԱՁԹԱՐ: Աղօթֆը պաշտամունքէն կը զատորոշուի, որովհետեւ Աստուած կը *պատասխանէ՛* աղօթողին խնդրուածֆները:

Մարմնականը աղօթֆ չի ծանչնար: Աղօթֆը արտայայտութիւնն է հոգեկան զօրեղ տենչի, սֆանչացման, վիշտի, թախիժի, մեծ Զօրութեան հանդէպ, որ աղօթողին համար կենդանի է կատարեալ և պատրաստ օգնելու: Հոգեկանը իրականութեան գործօն արտացոլացումն է, որ կ'իրագործուի մարմնական էակներու մէջ: Առանց հոգեկան և մարմնական ֆոխ-յարաբերութեան, աղօթֆ չի գոյանար և մարդ առանձին կը զգայ ինֆզինֆ այս վիթխարի համագոյութեան մէջ որպէս անիմաստ չոր մեֆենականութիւն, անխօս և սին ինֆնագոյացութիւն մը:

Հոգեկանի և մարմնականի ֆոխ-հաղորդութեամբ (աղօթֆով) մարդ պիտի ձգտի Յաւիտենականին, պիտի հասնի Անհասին, տեսնէ Անտեսանելին, ընդգրկէ Անսահմանը և ապրի Յաւիտենականը:

Յունուար 18, 1994

Թորոնթօ

ԻՄ ՊԱՏՃԱՌՈՎԱՍ ՊԻՏԻ ԳԱՅԹԱԿՂԻՔ

Քարոլթեան մարմնացեալ Անհատականութիւնը ինչպէ՞ս կրնայ գայթակղեցնել Իրեն հետեւողները: Յիսուս Քրիստոս՝ Իր անթերի մարդկութեամբ և անպակաս աստուածութեամբ ինչպէ՞ս կրնայ գէշ օրինակ հանդիսանալ: Աստուծոյ մարմնացեալ Ներկայութիւնը կարելի՞ է որ մոլորեցնէ մարդկութիւնը: Անհուն Ջգաստութիւն և լուսեղէն Յիսուս ինչպէ՞ս կրնայ սխալեցնել Իր աշակերտները: Ծիածինի նման լուսաճաճանչ կեանք բաշխող ԱստուածՈրդին ի՞նչ չար օրինակով կրնայ շեղել կամ փորձանքի մատնել մարդկային հէք հոգիները:

Ի՞նչ կը նշանակէ գայթակղեցնել:

«*Պիտի գայթակղիք*» յուն. բնագիրը "սգանտալիծո", և անգլերէնը "scandalize" է, որ կը նշանակէ՝ *սայթափիլ և մոլորիլ*: Այլ խօսքով, հաւատքը կորսնցնել կամ ենթակայի մը հաւատարմութիւնը և վստահութիւնը փոխանցել տարբեր անձի մը, կամ հետեւիլ ուրիշ գաղափարականի մը: Մարդիկ, ընդհանրապէս կը սայթափին, հրապուրուելով *հարստութենէ, փառասիրութենէ, իշխանութենէ կամ սեռայնական մղումներէ*:

Յոյսի և գոյատեւման Աղբիւր Քրիստոս ինչպէ՞ս կրնար սայթափեցնել ու մոլորեցնել Իրեն հաւատացողները, անցեալին և ներկային: Մոլորիլ, սայթափիլ և հաւատքը կորսնցնել աւելի *տրամադրութեա՛ն* և հակամիտութեան մէջ կը կայանայ քան թէ մոլորեցնողի մը սխալանքին:

Յակոբոս առաքեալ, Յիսուսի հաւատացողներուն կը գրէ.

«Իւրաքանչիւր ոք կը փորձուի՝ հրապուրուելով և խաբուելով իր ցանկութիւններէն»--Յակ. Ա. 14:

Ս. Պատարագի մատուցումէն յետոյ, Յիսուս և աշակերտները երբ կ'երթային Գեթսեմանի Պարտէզը, այդ պահը Յիսուս Քրիստոսի համար դարձաւ յաւերժատեւ ըրալէ մը: Այդ յաւերժութեամբ լեցուած երկնային հեռանկարին ներքեւ, արքայութեան Դուռ Յիսուս, ակընթարթի մը մէջ տեսաւ մոլորեալները, գայթակողները, ուրացողները, դասալիքները և անհաւատարիմները, որոնք պիտի լքէին Ձինք ու դառնային Իր հակառակորդները:

Յիսուս Քրիստոս իբրեւ ճշմարիտ և սրտցաւ Բժիշկ կանխաձայնեց և կանխազգաց Իր աշակերտներո՛ւն մէջ պատահելիք

դէպքերը, եկեղեցւոյ աստուածաբաններո՛ւն մէջ յարանուանական տարակարծութիւնները և ցաւալի "ես"ին բաժանումները եկեղեցիներու մրցակցութեա՛ն մէջ:

Նորայայտ իրադարձութիւններու և հասկացողութիւններու անկիւնադարձ կերտող Յիսուս կ'ըսէ.

«Իմ պատճառովս պիտի գայթակղիք»:

Քրիստոսի գործած ո՞ր "պատճառով, ո՞ր արարֆով, ո՞ր մէկ թերացումով" պիտի գայթակղին անցեալի և ներկայի Իրեն հետեւող աշակերտները:

Ո՞ր թերացած է Յիսուս Քրիստոս: Ի՞նչ սխալ գործած է անձնամատոյց Լուսեղէնը: Ի՞նչ մոլար վարդապետութիւն փարօզած է աստուածայայտնիչ Վարդապետը: Որո՞ւն հարստութեան կամ իշխանութեան աջ ունեցած է լոյսեր հագած Նազովրեցին: Որո՞ւն մահուան պատճառ եղած է Մարդեղութեան Փրկարար Չօրութիւնը:

Սակայն յաերժաւանդ Խորհուրդ Քրիստոս գայթակղեցուցա՛ծ է բազմաթիւ սոփեստ իմաստասէրներ, ազգայնամոլ անձնասէրներ և ատելավառ վրէժխնդիրներ, թէ՛ կրօնա-գաղափարական, թէ՛ գիտական և թէ՛ ֆաղափական եսամոլ տարածութեան մէջ:

Ո՞ր կրօնքը ներկայացուցած է իր աստուածը կամ աստուածները որպէս Սէր ու Անձնազոհ Աստուած: Ո՞ր հաւատալիքին մէջ գրուած է.

«Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ հաւատայ անոր՝ չկորսուի, այլ ընդունի յաւիտենական կեանքը»

Հայ ազգին փողափար Ս. Գրիգոր Նարեկացին կ'ըսէ.

**«Զի Դո՛ւ միայն ես երկնքում անճառ և երկրում ազնիւն,
Գոյութեան տարրերի մէջ և աշխարհի բոլոր ծագերում,
Սկիզբն ամէն ինչի, և ամէն ինչի մէջ՝ ամբողջ լրումով»:**

Կռապաշտ գաղափարաբանութեան մէջ, ո՞ր աստուածը անոխակալ և բարեգութ եղած է: Հա՛յր Աստուած բարութեամբ անսպառ է ու Բժիշկ աներեւոյթ վէրքերու, և զայրանալով չի բարկանար: Միթէ Չե՞ւսն էր թէ Ապողո՞ն որ ցոյց տուաւ սէր ու ողորմութիւն: Ո՞վ էր մշտնջենական և անփուն Պահապանը և տեւական յոյսի շօշափելի

Յայտնութիւնը եթէ ոչ Յիսուսայայտ Աստուած ճշմարիտը:

Յիսուսի շրթներուն վրայ Աստուած գերազանցապէս ու վեհափառօրէն *Հայրութիւն* է, որ կը զբաղի նոյնիսկ պարզ ճընճ-դուկներով: Աստուած կ'երեւի Իր արարչագործութեամբ և անոր հիաստանջ գեղեցկութեամբ, սակայն բնութիւնը չէ՛ Աստուած: Բնութիւնը, Անոր արտայայտչական երեւո՛յթն է միայն:

Սէր մը կայ, որ բանաստեղծները կ'երգեն, սիրահարները կ'երագեն և փիլիսոփաները կը վերլուծեն: Աստուածային սէրը Իր ինքնաբացայտումը պարզեց և իմացուց Յիսուս Բրիստոսի Խաչե-լութեամբ Գողգոթայի վրայ:

Աստուծոյ կոչին ընդառաջելով է, որ մարդ կ'ըմբռնէ գործունէութեան կերպը, որ է ֆաղցրութիւն, անձնագոհութիւն և նուիրում: Աստուածային Լոկոսը՝ (Բանն Աստուծոյն)՝ Խորհուրդը բնակելով մարդ արարածին ներսիդին, զայն կը դարձնէ խորհող և տրամաբանող էակ: Աստուծոյ Էութիւնը (մտածումը) միշտ վեր պիտի մնայ մարդոց կերտած նախապաշարեալ կաղապարներէն և դիտաւորութենէն: Հաւատքի լոյսը, արեւի լոյսով անտեսանելի տիեզերք մը կը տեսնէ, որ կը կոչուի աստուածայայտնութեան և խորհուրդի աշխարհ:

Կարգ մը հաւատացեալներու մօտ տիրապետող հոգին ո՛չ տրամաբանութիւնն է և ո՛չ հաւատքը, այլ միայն *զգացումը*՝ իրե՛նց տեսակէտը և իրե՛նց համոզումները: Հոն ուր *զգացականը* կը տիրապետէ, տրամաբանութիւնը կը նահանջէ:

Բոլոր անոնք որոնք անցեալին գայթակղեցան Յիսուս նազովրեցիէն, այսօր ալ գայթակղած կը շարունակեն իրենց ֆննադատական պարսաւանները, որովհետեւ անոնք *դրական* ցաւի չեն հաւատար: Ընդունելի է որ աշխարհի ցաւն ու տրտմութիւնը յառաջ կը բերեն մահ: Սակայն *դրական* ցաւ ալ կայ...: Աննկարագրելի *երկունքով* ու *երկունքէ՛ն* կը ծնի կեանքը և երջանկութիւնը: Արդարութիւնն ու ճշմարտութիւնը կը պահանջեն յարատեւ, հետեւողական և համադրուած աշխատանք: Աշխատանքը նուիրական գաղափար է, իսկ ծուլութիւնը մահացու մեղք: Յիսուս Բրիստոսի Ձեռները՝ որոնք պիտի օրհնէին, բժշկէին և լուսաւորէին, նախ թրջուեցան աշխատանքի մահուր ֆրտինքով:

Յիսուս Բրիստոս՝ Իր տասներկու աշակերտներով, ժամանակ մը կը հեռանայ Հրէաստանէ ու կ'երթայ Փիլիպպեան Կեսարիոյ կողմերը: Հրեաներու ժխտէն հեռու և միասնական մտերիմ յարաբերութեան մէջ, հրաշագործ Մարգարէն կը հարցնէ տասներկուսին ըսելով.

«Մարդիկ իմ մասիս ի՞նչ կ'ըսեն, ո՞վ է մարդու Որդին»--Մատթ.ԺԶ. 13:

Աշակերտներուն պատասխանը կ'ըլլայ.

«Մէկը թէ՛ Յովհաննէս Մկրտիչը, և ուրիշներ՝ եղիան, իսկ ոմանք ալ երեմեան կամ մարգարէներէն մէկը»--ԺԶ. 14:

Յիսուս Իր անուշ աչքերը ուղղելով անկեղծ աշակերտներուն կը հարցնէ անոնց ալ ու կ'ըսէ.

«Իսկ դու՛ք իմ մասիս ի՞նչ կ'ըսէք, ո՞վ եմ ես»

Աշակերտները անակնկալի եկած, իրար երես կը նային թէ ի՛նչ պատասխանեն: Պետրոս՝ համարձակ և անկաշկանդ յառաջ կը նետուի ու կը պատասխանէ.

«Դուն Զրիստոսն ես՝ կենդանի Աստուծոյ Որդին»:

Որպէս վարձատրանք և գովասանք Պետրոս աշակերտի ֆաջութեան, Յիսուս զայն կը գնահատէ և կ'ըսէ.

«Երանի՛ քեզի, Սիմո՛ն, Յովնանի՛ որդի,... դուն վէ՛մ ես, և այդ վէ՛մին վրայ պիտի շինեմ իմ Եկեղեցիս...և քեզի պիտի տամ երկնքի արքայութեան բանալիները»:

Յիսուս երբ կը բացայայտէ աշակերտներուն Իր ով ըլլալը, անոնք չափազանց ուրախ և երանելի կը զգան իրենք զիրենք: Յոյսի և գոյատեւման Ակնադրիւրը կ'ուզէ բացատրել աշակերտներուն, թէ յաջողութեան մը կատարումը և պսակը առանց *տառապանքի* չ'իրագործուիր: Յաւերժութեանդ Լուսաբացը ծնունդ պիտի առնէ Գողգոթայի տառապանքներէն:

Այնուհետեւ Յիսուս կը սկսի յստակօրէն յայտնել աշակերտներուն, թէ պէտք է որ Ինք Երուսաղէմ վերադառնայ, շատ չարչարանքներ կրէ քահանայապետներէն, դպրիւրներէն, ժողովուրդի ծերերէն և սպաննուի ու երրորդ օրը յարութիւն առնէ: Վերոյիշեալ կանխասացութիւնները հաւատալի չեն թուիր աշակերտներուն ու

Պետրոս կը վիճի Յիսուսի հետ...ու քաջաբար կ'ըսէ իր Վարդապետին. **«Քա՛ւ լիցի քեզ, Տէ՛ր, այդ բանը քեզ չի պատահիր»:** Պետրոսի պատասխանին մէջ կայ սիրոյ, հաւատարմութեան և մաղթանքի արտայայտութիւն: Սակայն այդ արտայայտութեան արմատը կու գայ *մարդկայի՛ն* տրամաբանութենէ և սիրոյ անգիտութենէ:

Այսօր ալ շատ մարդիկ կը գայթակղին մեր Տիրոջ սրբարար խօսքերէն, որովհետեւ Աւետարաններու սրբաշունչ և կենսանորոգ խօսքերը և պատուիրանները դիւանագիտական, առեւտրական, սպանողական մտայնութեան և եսամոլ անհատապաշտութեան խոտոր կու գան: Տառապանքին մէջէն է որ մեծ իրագործումներ յառաջ կու գան: Մահաթմա Կանտի և Մարթին Լուտէր Քինկ Կրտս. առարկայականօրէն ցոյց տուին Յիսուս Քրիստոսի գաղափարականը Քսաներորդ դարու մարդկութեան, թէ՛ սիրոյ ու տառապանքի զօրոյթը կը գերազանցէ սուրի և զէնքի զօրութիւնը:

Մոռնալու չէ որ մի միայն իրիկնամուտին (տառապանքի և ցաւի մէջ) քաղններուն կ'երեւի լուսազարդուած և գեղեցկատեսիլ աստղակամար երկինքը: Ցաւը և տառապանքն է որ մարդկային ցեղը կը միաւորեն: Լոս Անճէլըս քաղաքի երկրաշարժէն յետո՛յ է, որ անձանօթ դրացիներ զիրար ծանչցան, ողջագուրուեցան և սկսան օգնել իրարու...:

Յիսուս Քրիստոսի առաքելութիւնը աստուածային սիրոյ գերագոյն արտայայտութիւնն էր հանդէպ տառապակոծ աշխարհի: Ապրումներ և գաղափարներ կը հարստանան երբ հեղինակը կամ բանաստեղծը կ'ապրի ցաւին, երանութեան և ոգեւորութեան հարազատութիւնը: Յիսուս Քրիստոս յայտնեց Աստուծոյ միտքը՝ Անոր *սիրոյն* և *տառապանքին* ընդմէջէն: Աւետարանի իրաքանչիւր դրուագ՝ ցոյց մըն է Աստուծոյ սիրոյն և ցաւին: Գողգոթայի սարին վրայ պատուեցաւ հազարաւոր տարիներու խաւրակուտ վարագոյրը (տաճարին) յայտնաբերելու համար Աստուծոյ սէրը և տառապանքը, որպէս տիեզերքի արարչագործութեան շաղախ: Սիրոյ և տառապանքի հակադիր *գաղափա՛րն* է որ գայթակղեցուց Յոյն-Հռոմայական իմաստասէրներու տրամաբանութիւնը: Առաքելներու արեա՛ն ոռոգումէն յետո՛յ աշխարհ սկսաւ ըմբռնել սիրոյ և տառապանքի *զուգահեռ* գործակցութիւնը:

«Սէրն ու վիշտը, հաւատքն ու փորձութիւնը պիտի կազմեն նախանիւթը արարչական և էստարրը ծնուցիչ» գրած է հաւատացեալ մը, որովհետեւ ի՛նք ալ անցած է սիրոյ և տառապանքի բովէն: Յիսուս Քրիստոս ջանաց Իր աշակերտներուն սորվեցնել, թէ մարդու

իննականատարելագործման ուղին կ'անցնի սիրոյ մաքրագտման
փուլային (տառապանքէն): Յիսուս Խօսք մը կամ յորդոր մը չէ՛ որ
կ'ուղղէ աշխարհի, այլ Իր սիրտն է որ կը բաշխէ համայն մարդ-
կութեան Ս. Խաչին վրայէն:

Կ'ուզե՞ս չգայթակղիլ Յիսուս Քրիստոսի խօսքերէն ու դառնալ
հաւատարիմ վկայ:

**Սլացիր վեր, վե՛ր, դէպի Խորհուրդը Մեծ,
դէպի Սէր ու տառապեալ Աստուած:**

Փետրուար 1, 1994
Թորոնթօ

=====

Կանթեղալոյս հրատարակութեան տպագրական ֆանակը՝
Հայերէն լեզուով 1000 օրինակ
Անգլերէն լեզուով 500 օրինակ

2000 Տարուայ ընթացքին Կանթեղալոյս հրատարակութեանը ստացած է 2165.00 տոլարի նուիրատուութիւն իր հաւատացեալ ընթերցողներէն: Աստուած վարձատրէ զիրենք և աղօթողները: Տէրը օրհնէ ու աճեցնէ սերսերմանուած Խօսքը: